

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

---

Հայաստանի Հանրապետության պետական զինանշան  
Ընդհանուր տեխնիկական պայմաններ



ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆ 2012

## Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով:

### Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանշանների ճանաչման, արժեվորման և հանրահոշակման ապահովման աշխատանքային խմբի կողմից

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից

3 ՀԱՍՏԱՏՎԵԼ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ ՀՀ ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի N 84-Վ հրամանով

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում

5 ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

*Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրատարակվում են “Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ” տեղեկատվի մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրատարակվի նշված տեղեկատվի մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ*

*ՓԲԸ-ի ինտերնետային կայքում ([www.sarm.am](http://www.sarm.am)):*

**Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի թույլտվության**

**Բովանդակություն**

1 Կիրառման ոլորտը .....	1
2 Պատրաստմանը ներկայացվող տեխնիկական պահանջներ .....	1
3 Օգտագործմանը ներկայացվող տեխնիկական պահանջներ .....	2
4 Մակնշումը .....	3
5 Փաթեթավորումը.....	3
6 Արտադրողի երաշխիքը .....	3



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆ Ընդհանուր տեխնիկական պայմաններ

Государственный герб Республики Армения  
Общие технические условия

National coat of arms of the Republic of Armenia  
General specifications

Գործարկման թվականը-01.01.2013

### 1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի (այսուհետ՝ պետական զինանշան) ձևին, չափերին և պատրաստմանը ներկայացվող տեխնիկական պահանջներ:

Պետական զինանշանի կիրառումը պետք է իրականացվի «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

### 2 Պատրաստմանը ներկայացվող տեխնիկական պահանջներ

2.1 Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերը (գունավոր և միագույն) տրված է սույն ստանդարտի Ա հավելվածում, իսկ նկարագրությունը՝ Բ հավելվածում:

2.2 Պետական զինանշանը պետք է պատրաստվի սույն ստանդարտի պահանջներին, ինչպես նաև սահմանված կարգով հաստատված նմուշ-էտալոնին համապատասխան:

2.3 Պետական զինանշանը կարող է պատրաստվել տարածական և գրաֆիկական տեսքով: Գրաֆիկական պատկերը կարող է լինել միագույն և գունավոր: Գունավոր գրաֆիկական պատկերը պարունակում է ոսկեգույն, կարմիր, կապույտ և նարնջագույն գույները:

2.3.1 Տարածական կատարմամբ պետական զինանշանը, անկախ իր չափերից և ստացման տեխնոլոգիական եղանակից, պետք է համապատասխանի սահմանված կարգով հաստատված նմուշ-էտալոնին և տեխնիկական փաստաթղթերին՝ ըստ ձևի, չափերի ու համամասնության:

2.3.2 Պետական զինանշանի գրաֆիկական պատկերը կարող է ստացվել ցանկացած տեխնոլոգիական եղանակով (տպագրության, դրոշմելու, փորագրության, համակարգչային գրաֆիկայի և այլ միջոցներով) և անկախ չափերից պետք է պահպանի

պետական զինանշանի հստակ և պարզ պատկերը՝ իր ծառայության ժամանակահատվածում: Պետական զինանշանի միագույն պատկերը՝ սև կամ մի այլ մեկ գույնով կամ էլ՝ անգույն (օրինակ՝ տարբեր եղանակներով դրոշմված) ուրվագծային պատկերն է: Ուրվագծերի միջև ընկած հատվածները չպետք է գունավորած լինեն և պետք է պահպանեն թղթի կամ այն կրիչի գույնը, որի վրա պատկերված է պետական զինանշանը: Պետական զինանշանի տարածական պատկերը, ինչպես նաև պետական զինանշանի պատկերը, մետաղի վրա համարվում է միագույն, եթե համապատասխանում է այն նյութի գույնին, որից այն պատրաստված է:

Հայաստանի Հանրապետության գունավոր պետական զինանշանի գույները պետք է համապատասխանեն տարբեր գունային մոդելների արժեքներին, որոնք տրված են 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1.

Գույնը	Pantone	RGB	CMYK	html
Արծիվ և առյուծ	124	R: 255 G: 196 B: 75	C: 0% M: 25% Y: 80% K: 0%	#FEC34E
Կարմիր	485	R: 217; G: 0; B: 18	C: 0% M: 100% Y: 100% K: 0%	#D90012
Կապույտ	286	R: 0; G: 51; B: 160	C: 100% M: 80% Y: 0% K: 0%	#0033A0
Նարնջագույն	1235	R: 242; G: 168; B: 0	C: 0% M: 35% Y: 100% K: 0%	#F2A800

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ- **Pantone** և **CMYK** տարբերակները կիրառվում են տպագրությունում, **RGB** տարբերակ կիրառվում է կայքերում և հեռուստատեսությունում, **html** տարբերակը կիրառվում է կայքերում:

**3 Օգտագործմանը ներկայացվող պահանջներ**

**3.1** Ղեկավարների սենյակում տեղադրվում է պետական զինանշան, որի արտագծյալ շրջանագծի տրամագիծը 500 մմ է:

**3.2** Հանդիպումների սենյակներում եւ դահլիճներում, որտեղ նախատեսված է տեղադրել պետական զինանշանը, նախընտրելի է, որ այն տեղադրվի նախագահության ետևի պատին՝ նախագահողի թիկունքի ուղղությամբ: Այս դեպքում տեղադրվում է պետական զինանշանը, որի արտագծյալ շրջանագծի տրամագիծը 1000 -ից մինչև 3000 մմ է՝ կախված տարածքի չափերից:

**3.3** Պաշտոնական հանդիպումների սրահների ամբիոնի վրա հատուկ նախատեսված տեղում տեղադրվում է պետական զինանշանը, որի արտագծյալ շրջանագծի տրամագիծը 250 մմ է:

**3.4** Մուտքի մոտ տեղադրված ցուցանակի վրա պետական կազմակերպության անվանման հետ միասին ցուցանակի վերին կենտրոնական մասում զետեղվում է պետական զինանշանը, որի արտագծյալ շրջանագծի տրամագիծը 120 -ից մինչև 200 մմ է՝ կախված ցուցանակի չափերից:

**3.5** Չի թույլատրվում պետական զինանշանն օգտագործել ոչ պետական կազմակերպությունների և դրանց ղեկավարների բլանկների, կնիքների, այցեքարտերի և այլ ռեկվիզիտների վրա:

#### **4 Մակնշումը**

Պատրաստի պետական զինանշանին ամրացվում է ապրանքային պիտակը, որտեղ նշվում է.

- արտադրողի անվանումը, նրա ապրանքային նշանը, գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն՝ ներառյալ երկիրը)

- արտադրատեսակի անվանումը և դրա չափերը , մմ,

- կիրառման ոլորտը,

- սույն ստանդարտի նշագիրը,

- թողարկման թվականը:

Պիտակը լրացվում է տպագրական եղանակով կամ դրոշմման միջոցով:

#### **5 Փաթեթավորումը**

Պետական զինանշանի փաթեթավորումը կատարվում է տուփերի կամ փաթեթների մեջ: Առաջնային փաթեթավորումը համաձայնեցվում է պատվիրատուի (սպառողի) հետ, իսկ դրա բացակայության դեպքում՝ ըստ արտադրողի հայեցողության: Փաթեթավորումը պետք ապահովի արտադրանքի որակի պահպանումը:

Սպառողի հետ համաձայնության դեպքում թույլատրվում է օգտագործել փաթեթավորման այլ միջոցներ:

Փաթեթավորման միավորի վրա փակցվում է պիտակը, որը պարունակում է 4.1 կետի տեղեկատվությունը, արտադրանքի քանակը:

#### **6 Արտադրողի երաշխիքները**

Արտադրողը երաշխավորում է արտադրանքի որակի համապատասխանությունը սույն ստանդարտի պահանջներին

պատվիրատուի կողմից արտադրանքի փոխադրման և պահման պայմանները պահպանելու դեպքում:

## Հավելված Ա

(պարտադիր)

### Հայաստանի Հանրապետության պետական զինանշանը



**Նկար Ա.1** - Հայաստանի Հանրապետության պետական զինանշանը

(գունավոր տարբերակ)



**Նկար Ա.2** - Հայաստանի Հանրապետության պետական զինանշանը

(միագույն տարբերակ)



## **Հավելված Բ**

(պարտադիր)

### **Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի նկարագրությունը**

Հայաստանի Հանրապետության զինանշանը Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից է:

Հայաստանի Հանրապետության զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և պատմական Հայաստանի թագավորություններից չորսի՝ ձախ կողմի վերևում՝ Բագրատունիների, աջ կողմի վերևում՝ Արշակունիների, ձախ կողմի ներքևում՝ Արտաշիսյանների, աջ կողմի ներքևում՝ Ռուբինյանների զինանշանները: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

Հայաստանի Հանրապետության զինանշանի հիմնական գույնը ոսկեգույնն է, պատմական Հայաստանի թագավորություններինը՝ ձախ կողմի վերևում՝ կարմիր, աջ կողմի վերևում՝ կապույտ, ձախ կողմի ներքևում՝ կապույտ, աջ կողմի ներքևում՝ կարմիր, և կենտրոնում՝ վահանի վրա պատկերված Արարատ լեռը՝ նարնջագույն: Նշված գույները խորհրդանշում են Հայաստանի Հանրապետության դրոշի գույները:

Հանգուցային բառեր. պետական զինանշան, տեխնիկական պահանջներ, տարածական պատկեր, գրաֆիկական պատկեր